«ՀՀ Արագածոտնի մարզի Թթուջրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ աշխարհագրության (5 դասաժամ),մաթեմատիկայի(17դասաժամ) ,ինֆորմատիկայի (3),հայոց եկեղեցու պատմության(3դասաժամ) և ֆիզկուլտուրայի(9դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազ-րույցն անցկացնում առանձին:Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1.Դիմում(Ձեւ1),մեկլուսանկար3x4չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկա-յացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժա-մը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 13-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Թթուջրի հիմնական դպրոցում. հասցեն՝ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Թթուջուր բնակավայր, Հայկ Նահապետի փողոց, շենք՝ 1:

Տեղեկությունների համար զանգահարել 093 38-93-64 հեռախոսահամարով: